Կազմված է 25.09.2025թ.

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	ԳՐԱՆՑՎԱԾ Է
«ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ	ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «01» 12 2025թ
ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ի ՈՐՈՇՄԱՄԲ	ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.1494361
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ	ՀՎՀՀ՝ 03311698
(ստորագրություն)	Աշխատակից՝
Հրաչյա Սիրեղյան	«01» 12 2025թ.
(անուն, ազգանուն)	

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Կարգավիճակ և բնույթ

1.1.1 «Արևային էներգետիկայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա) հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ և շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում:

1.1.2 Ասոցիացիան իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենսդրությանը, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սույն Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխան:

1.1.3 Ասոցիացիան պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

1.1.4 Ասոցիացիան ստեղծված է համարվում առանց ժամկետի սահմանափակման (անժամկետ):

1.2 Գործունեության սկզբունքներ

Ասոցիացիայի գործունեությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1.2.1 օրինականության,

1.2.2 բարեխղճության,

1.2.3 հրապարակայնության,

1.2.4 անդամների շահերի ընդհանրության,

1.2.5 ինքնակառավարման,

1.2.6 անդամների կամավորության,

1.2.7 իրավահավասարության,

1.2.8 հաշվետվողականության,

1.2.9 խտրականության բացառման:

1.3 Սեփականություն և պատասխանատվություն

1.3.1 Ասոցիացիան՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

1.3.2 Ասոցիացիայի գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը, անդամների միջև չի բաշխվում:

1.3.3 Ասոցիացիան պատասխանատվություն չի կրում պետության և նրա մարմինների պարտավորությունների համար, այնպես ինչպես և պետությունը և նրա մարմինները պատասխանատվություն չեն կրում Ասոցիացիայի պարտավորությունների համար:

1.3.4 Ասոցիացիան պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, այնպես ինչպես և Ասոցիացիայի անդամները պատասխանատվություն չեն կրում Ասոցիացիայի պարտավորությունների համար:

1.4 Իրավունքներ

1.4.1 Ասոցիացիան իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:
1.4.2 Ասոցիացիան կարող է ստեղծել և ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ:
1.4.3 Ասոցիացիան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ:

1.5 Անվանումներ

1.5.1 Հայերեն՝ «Արևային էներգետիկայի հայկական ասոցիացիա» Հասարակական կազմակերպություն
Հապավում՝ «ԱԷՀԱ» ՀԿ
1.5.2 Անգլերեն՝ Non-Governmental Organization «Armenian Solar Energy Association»
Հապավում՝ NGO «ASEA»
1.5.3 Ֆրանսերեն՝ Organisation non gouvernementale «Association Énergétique Arménienne Solaire»
Հապավում՝ ONG «AEAS»
1.5.4 Ռուսերեն՝ Общественная организация «Армянская ассоциация солнечной энергетики»
Հապավում՝ ՕՕ «ԱԱՀԷ»

1.6 Խորհրդանիշներ

1.6.1 Ասոցիացիան ունի կլոր կնիք, որի վրա շրջանաձև երեք լեզվով (հայերեն, անգլերեն և ֆրանսերեն) իրար տակ գրված է Ասոցիացիայի ամբողջական անվանումը, իսկ կենտրոնում՝ երեք լեզվով իրար տակ գրված է Ասոցիացիայի հապավումը, որի ներքևում գրված է ՀՎՀՀ-ն:

1.7 Գտնվելու վայր

1.7.1 Ասոցիացիայի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Պռոշյան փողոց շենք 18 հասցեն:
1.7.2 Ասոցիացիայի գտնվելու վայրի փոփոխության դեպքում Ասոցիացիան իրավաբանական անձանց պետական գրանցման մարմնին տեղեկացնում է օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

2.1 Հիմնական նպատակներ

2.1.1 Նպաստել ՀՀ-ում արևային էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարության մշակմանը,

2.1.2 Աջակցել հանրային քաղաքականության և միասնական գործիքակազմի մշակմանը,

2.1.3 Պաշտպանել և ներկայացնել ոլորտի ընկերությունների շահերը,

2.1.4 Զարգացնել ոլորտում մասնագիտական կրթությունը և վերապատրաստումը:

2.2 Խնդիրների լուծման սկզբունքներ

2.2.1 Ասոցիացիան զբաղվում է անդամակցող առանձին կազմակերպության խնդրի լուծմամբ, միայն եթե այն ունի կամ կարող է ունենալ համընդհանուր և համակարգային բնույթ:

2.2.2 Ասոցիացիայում քննարկվում և լուծվում են բացառապես ոլորտին առնչվող խնդիրներ:

2.3 Ասոցիացիայի ձեռնարկատիրական գործունեությունը

2.3.1 Ասոցիացիան իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

2.3.2 Ասոցիացիան վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում:

2.3.3 Ասոցիացիայի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

3. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3.1 Անդամակցության տեսակներ

Ասոցիացիան սահմանում է անդամակցության երեք ձև՝

3.1.1 Լիիրավ անդամ

3.1.2 Գործընկեր անդամ

3.1.3 Կապակցված անդամ

3.2 Լիիրավ անդամ դառնալու պահանջներ

Լիիրավ անդամ կարող են լինել ՀՀ-ում գրանցված այն իրավաբանական անձինք, ովքեր գործում են արևային էներգետիկայի ոլորտում՝

3.2.1 Ներկրողներ, արտադրողներ, տեղադրողներ, սպասարկողներ,

3.2.2 Արևային կայանների սեփականատերեր և վերահսկողներ,

3.2.3 Ոչ պետական բուհեր և գիտահետազոտական ինստիտուտներ,

3.2.4 Նորարարական և տեխնոլոգիական կենտրոններ,

3.2.5 Մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ կրթություն և մասնագիտական վերապատրաստում իրականացնող ոչ պետական կազմակերպություններ:

3.3 Գործընկեր անդամ դառնալու պահանջներ

Գործընկեր անդամ կարող են լինել ՀՀ-ում գրանցված այն իրավաբանական անձինք, ովքեր գործում են հետևյալ ոլորտներում՝

3.3.1 Ֆինանսական և ֆինանսավարկային ծառայություններ,

3.3.2 Իրավաբանական և խորհրդատվական ծառայություններ,

3.3.3 Ապահովագրական ծառայություններ,

3.3.4 Կառուցապատում և ենթակառուցվածքների զարգացում,

3.3.5 Էլեկտրատեխնիկական և ինժեներական ծառայություններ,

3.3.6 Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն,

3.3.7 Կառավարման խորհրդի որոշմամբ հաստատված այլ ոլորտներ, որոնք անմիջականորեն կապված են արևային էներգետիկայի զարգացման, ներդրման կամ շահագործման հետ:

3.4 Կապակցված անդամ դառնալու պահանջներ

Կապակցված անդամ կարող են լինել՝

3.4.1 Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող այն հետազոտական և կրթական հաստատությունները, այդ թվում՝ բուհեր, գիտահետազոտական ինստիտուտներ, նորարարական և տեխնոլոգիական կենտրոններ, մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնց կանոնադրությունը սահմանում է ասոցիացիայի անդամակցության հնարավորություն:

3.4.2 Էներգետիկայի ոլորտում հինգից ավելի տարի մասնագիտական գործունեություն ծավալող և Կառավարման խորհրդի կազմի կողմից բանավոր երաշխավորություն ստացած չափահաս ֆիզիկական անձինք:

3.5 Անդամագրվելու կարգ

3.5.1 Անդամագրվելու համար դիմողը Կառավարման խորհրդին ներկայացնում է գրավոր դիմում՝ նշելով անդամակցության ցանկալի ձևը և նպատակները:

3.5.2 Դիմումին կից ներկայացվում են՝

Լիիրավ անդամի դեպքում՝

ա) Կազմակերպության պետական գրանցման վկայական (պատճեն),

բ) Կազմակերպության գործունեության մանրամասն նկարագրություն՝ հիմնադիրների և ղեկավար մարմինների կազմ, իրականացված և ընթացիկ նախագծերի ցանկ,

գ) Արևային էներգետիկայի ոլորտում գործունեության փաստաթղթային հիմնավորում:

Գործընկեր անդամի դեպքում՝

ա) Կազմակերպության պետական գրանցման վկայական (պատճեն),
բ) Կազմակերպության գործունեության մանրամասն նկարագրություն,
գ) Հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների դեպքում՝ կանոնադրություն,
դ) Արևային էներգետիկայի ոլորտի հետ կապի և համագործակցության ցանկալի ուղղությունների նկարագրություն:

Կապակցված անդամի դեպքում՝

Ֆիզիկական անձի դեպքում՝

ա) Անձնագրի պատճեն,
բ) Մասնագիտական կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ, վկայական),
գ) Աշխատանքային փորձառության նկարագրություն (ինքնակենսագրական):

Այլ իրավաբանական անձի դեպքում՝

ա) Պետական գրանցման վկայական (պատճեն),
բ) Կանոնադրություն:

3.5.3 Կառավարման խորհուրդը քննարկում և որոշում է կայացնում դիմումի վերաբերյալ՝ դիմումի ստացումից ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:

3.5.4 Անդամակցության մասին որոշումը կայացվում է Կառավարման խորհրդի անդամների պարզ մեծամասնությամբ:

3.5.5 Անդամակցության հաստատման դեպքում դիմողին 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է գրավոր ծանուցում՝ անդամավճարի չափի և վճարման ժամկետների նշումով:

3.5.6 Անդամակցությունը համարվում է սկսված՝ անդամավճարի վճարումից հետո:

3.5.7 Անդամակցությունը մերժելու դեպքում դիմողին ուղարկվում է պատճառաբանված գրավոր պատասխան: Մերժված դիմողն իրավունք ունի կրկին դիմելու՝ 6 (վեց) ամիս անց:

3.6 Անդամությունից դուրս գալու կարգ

3.6.1 Ասոցիացիայի անդամն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ Ասոցիացիայից:

3.6.2 Անդամությունից դուրս գալու համար անդամը դուրս գալու օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր տեղեկացնում է Կառավարման խորհրդին՝ կատարելով իր գույքային, ֆինանսական կամ այլ պարտավորությունները Ասոցիացիայի առջև:

3.7 Անդամությունից հեռացում

3.7.1 Ասոցիացիայի անդամի կողմից Ասոցիացիայի խնդիրներին և նպատակներին հակադիր և խոչընդոտող գործունեությունը և/կամ ավելի քան երեք ամիս անդամավճար չմուծելը կարող է հանգեցնել տվյալ անդամի Ասոցիացիայից

հեռացման՝ Կառավարման խորհրդի նիստին ներկա անդամների պարզ մեծամասնության որոշմամբ:
3.7.2 Ասոցիացիայից հեռացված անդամի նկատմամբ կիրառվում են Ասոցիացիայից դուրս գալուն վերաբերող կանոնները:

4. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Լիիրավ անդամի իրավունքները

Լիիրավ անդամն իրավունք ունի՝
4.1.1 Ասոցիացիայի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Ասոցիացիայի կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում,
4.1.2 Մասնակցել Ընդհանուր ժողովներին և Կառավարման խորհրդի նիստերին՝ լիազորված անձի միջոցով,
4.1.3 Ստանալ Ասոցիացիայի գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, իրականացվող և պլանավորվող նախագծեր, ռազմավարական փաստաթղթեր և քաղաքականություն, Համաժողովի և Կառավարման խորհրդի որոշումներ,
4.1.4 Առաջարկություններ և նախաձեռնություններ ներկայացնել Ասոցիացիայի գործունեության բարելավման վերաբերյալ,
4.1.5 Գործադիր տնօրենի կողմից սահմանված դեպքերում և կարգով օգտվել Ասոցիացիայի կողմից տրամադրվող ծառայություններից, խորհրդատվությունից և աջակցությունից,
4.1.6 Ներկայացնել Ասոցիացիան արտաքին միջոցառումներում, հանդիպումներում և բանակցություններում՝ Կառավարման խորհրդի նախնական թույլտվությամբ,
4.1.7 Օգտագործել Ասոցիացիայի անվանումը և լոգոն՝ Կառավարման խորհրդի հաստատած կանոնների համաձայն,
4.1.8 Ծանոթանալ Ասոցիացիայի մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
4.1.9 Վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Ասոցիացիայի մարմինների որոշումները,
4.1.10 Ասոցիացիայից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Ասոցիացիայի կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին:

4.2 Լիիրավ անդամի պարտականությունները

Լիիրավ անդամը պարտավոր է՝

4.2.1 Առաջնորդվել Ասոցիացիայի Կանոնադրությամբ, ներքին կանոնակարգերով և Համաժողովի որոշումներով,

4.2.2 Վճարել անդամավճարները՝ Կառավարման խորհրդի կողմից սահմանված չափով և ժամկետներում,

4.2.3 Ակտիվ մասնակցություն ցուցաբերել Ասոցիացիայի գործունեությանը,

4.2.4 Պահպանել Ասոցիացիայի անունը, հեղինակությունը և բարի համբավը,

4.2.5 Ներկայացնել Ասոցիացիայի խնդրած տեղեկատվությունը՝ սահմանված ձևաչափով և ժամկետներում,

4.2.6 Տեղեկացնել Ասոցիացիային իրենց կազմակերպության հիմնական տվյալների փոփոխության մասին՝ 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում,

4.2.7 Բարեխղճորեն կատարել Կառավարման խորհրդի և Համաժողովի որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

4.3 Գործընկեր անդամի իրավունքները

Գործընկեր անդամն իրավունք ունի՝

4.3.1 Մասնակցել Համաժողովներին խորհրդատվական ձայնով (առանց քվեարկության իրավունքի),

4.3.2 Արտահայտել կարծիք և ներկայացնել առաջարկություններ Ասոցիացիայի ռազմավարական ուղղությունների, նախագծերի և քաղաքականության վերաբերյալ,

4.3.3 Ստանալ Ասոցիացիայի գործունեությանը վերաբերող տեղեկատվություն,

4.3.4 Մասնակցել Ասոցիացիայի կողմից իրականացվող համատեղ նախագծերին,

4.3.5 Օգտվել Ասոցիացիայի ցանցային հնարավորություններից և մասնագիտական համագործակցությունից,

4.3.6 Օգտագործել Ասոցիացիայի գործընկեր անդամի կարգավիճակը՝ Կառավարման խորհրդի հաստատած կանոնների համաձայն:

4.4 Գործընկեր անդամի պարտականությունները

Գործընկեր անդամը պարտավոր է՝

4.4.1 Առաջնորդվել Ասոցիացիայի Կանոնադրությամբ և օրենսդրությամբ,

4.4.2 Վճարել անդամավճարները՝ Կառավարման խորհրդի կողմից սահմանված չափով և ժամկետներում,

4.4.3 Պահպանել Ասոցիացիայի անունը և հեղինակությունը,

4.4.4 Տեղեկացնել Ասոցիացիային իրենց կազմակերպության հիմնական տվյալների փոփոխության մասին՝ 15 օրացուցային օրվա ընթացքում:

4.5 Կապակցված անդամի իրավունքները

Կապակցված անդամն իրավունք ունի՝

4.5.1 Մասնակցել Համաժողովներին՝ դիտորդի կարգավիճակով (առանց քվեարկության իրավունքի),

4.5.2 Արտահայտել կարծիք Ասոցիացիայի գործունեության վերաբերյալ՝ Ընդհանուր ժողովի նախագահի թույլտվությամբ,
4.5.3 Ստանալ Ասոցիացիայի գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվություն,
4.5.4 Մասնակցել Ասոցիացիայի կողմից կազմակերպվող բաց միջոցառումներին,
4.5.5 Նախաձեռնել և իրականացնել համատեղ հետազոտական, կրթական և նորարարական նախագծեր:

4.6 Կապակցված անդամի պարտականությունները

Կապակցված անդամը պարտավոր է՝
4.6.1 Առաջնորդվել Ասոցիացիայի Կանոնադրությամբ և օրենսդրությամբ,
4.6.2 Վճարել անդամավճարները՝ Կառավարման խորհրդի կողմից սահմանված չափով և ժամկետներում,
4.6.3 Պահպանել Ասոցիացիայի անունը և հեղինակությունը,
4.6.4 Տեղեկացնել Ասոցիացիային իր հիմնական տվյալների փոփոխության մասին՝ 15 օրացուցային օրվա ընթացքում:

5. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1 Կառավարման մարմինների կառուցվածքը

5.1.1 Ասոցիացիայի բարձրագույն ղեկավար մարմինը Ընդհանուր ժողովն է,
5.1.2 Ասոցիացիայի կոլեգիալ կառավարման մարմինը Կառավարման խորհուրդն է,
5.1.3 Ասոցիացիայի գործադիր մարմինը Գործադիր տնօրենն է,
5.1.4 Ասոցիացիայի վերահսկող մարմինը Վերստուգողն է:
5.1.5 Ասոցիացիան՝ գործադիր տնօրենից բացի, առանց լիազորագրի ներկայացնող անձը Կառավարման խորհրդի նախագահն է:
5.1.6 Ասոցիացիայի անդամը, որն ընդգրկված է Կառավարման խորհրդում, չի կարող միաժամանակ ընտրվել Վերստուգող:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

6.1 Ընդհանուր ժողովի կարգավիճակ և իրավասություն

6.1.1 Ընդհանուր ժողովն ունի Ասոցիացիայի գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

6.2 Ընդհանուր ժողովի գումարման կարգ

6.2.1 Հերթական Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ՝ գործադիր տնօրենի կողմից:
6.2.2 Ընդհանուր ժողովի գումարման օրը, վայրը և օրակարգը հայտարարվում է ոչ ուշ, քան 14 օր առաջ՝ մինչև Ընդհանուր ժողովի գումարման օրը՝ պատվիրված

նամակով կամ էլեկտրոնային եղանակով՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

6.2.3 Արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրվում է՝

ա) Կառավարման խորհրդի անդամների պարզ մեծամասնության նախաձեռնությամբ,

բ) Կառավարման խորհրդի նախագահի նախաձեռնությամբ,

գ) Գործադիր տնօրենի նախաձեռնությամբ,

դ) Ասոցիացիայի Լիիրավ անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ,

ե) Վերստուգող մարմնի նախաձեռնությամբ:

6.2.4 Արտահերթ Ընդհանուր ժողովը գումարվում է նախաձեռնությունից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում՝ գործադիր տնօրենի կողմից: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան արտահերթ ժողով անցկացնելու օրվանից հինգ օր առաջ:

6.2.5 Ընդհանուր ժողովը կարող է անցկացվել դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

6.3 Ընդհանուր ժողովի իրավազորություն

6.3.1 Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե նիստին ներկա են Ասոցիացիայի Լիիրավ բոլոր անդամների կեսից ավելին:

6.3.2 Ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում ժողովին ներկա Ասոցիացիայի Լիիրավ անդամների թվի կեսից ավելի ձայներով:

6.3.3 Ընդհանուր ժողովում Կանոնադրությունը կամ նրանում փոփոխությունների, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումներն ընդունվում են ներկա Լիիրավ անդամների առնվազն 2/3 ձայների մեծամասնությամբ:

6.4 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները

Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

6.4.1 Կատարել Ասոցիացիայի Կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատել Կանոնադրությունը,

6.4.2 Որոշումներ ընդունել այլ իրավաբանական անձ ստեղծելու մասին,

6.4.3 Որոշումներ ընդունել այլ կազմակերպությունում Ասոցիացիայի մասնակցության մասին,

6.4.4 Որոշումներ ընդունել Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,

6.4.5 Հաստատել Կազմակերպության կառուցվածքը,

6.4.6 Ընտրել կառավարման խորհրդի անդամներին, Գործադիր տնօրենին և վերստուգողին՝ վաղաժամկետ դադարեցնել նրանց լիազորությունները,

6.4.7 Ընտրել Ասոցիացիայի աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե օրենքով սահմանված է պարտադիր աուդիտ,
6.4.8 Ընդունել որոշում Կազմակեպության վերակազմակերպման մասին,
6.4.9 Ընդունել որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին,
6.4.10 հաստատել Կազմակերպության ռազմավարությունը,
6.4.11 Դադարեցնել Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը:

6.5 Ընդհանուր ժողովի արձանագրություն

6.5.1 Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են:
6.5.2 Արձանագրությունը հաստատվում է Ընդհանուր ժողովի նախագահողի և քարտուղարի ստորագրություններով:
6.5.3 Ընդհանուր ժողովի նիստերի արձանագրությունները և կազմակերպության գործունեության հաշվետվությունները պահպանվում են առնվազն հինգ տարի:

7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

7.1 Խորհրդի կազմավորում և գործունեություն

7.1.1 Կառավարման խորհրդի անդամների քանակը որոշվում է Ընդհանուր ժողովի կողմից:
7.1.2 Կառավարման խորհուրդն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից 1 (մեկ) տարի ժամկետով:
7.1.3 Կառավարման խորհուրդն ընտրվում է Ասոցիացիայի Լիիրավ անդամների կազմից:

7.2 Խորհրդի նիստեր

7.2.1 Կառավարման խորհրդի հերթական և արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Խորհրդի նախաձեռնությամբ, կամ Խորհրդի նախագահի, Գործադիր տնօրենի, Վերստուգողի պահանջով:
7.2.2 Նիստի գումարման օրը, վայրը և օրակարգը հայտարարվում է ոչ ուշ, քան 14 օր առաջ՝ մինչև նիստի գումարման օրը:
7.2.3 Կառավարման խորհուրդը որոշումներ է ընդունում նիստին ներկա բոլոր անդամների պարզ մեծամասնության ձայներով:
7.2.4 Խորհրդի նիստերն արձանագրվում են:
7.2.5 Արձանագրությունը հաստատվում է Խորհրդի նախագահի և քարտուղարի ստորագրություններով:
7.2.6 Խորհրդի արձանագրությունները պահպանվում են առնվազն հինգ տարի:

7.3 Խորհրդի իրավասությունները

Կառավարման խորհուրդն իրավասու է՝

7.3.1 Մշակել Ասոցիացիայի ռազմավարությունը և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը,
7.3.2 Յուրաքանչյուր տարի հաստատել գործադիր տնօրենի կողմից հաստատված կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
7.3.3 Ընտրել Կառավարման խորհրդի նախագահին՝ 1 (մեկ) տարի ժամկետով, վաղաժամկետ դադարեցնել նրա լիազորությունները,
7.3.4 Կայացնել որոշում վերակազմակերպման մասին (նիստին ներկա Կառավարման խորհրդի անդամների առնվազն 2/3 ձայների մեծամասնությամբ) և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը,
7.3.5 Կայացնել որոշում լուծարման մասին (նիստին ներկա Կառավարման խորհրդի անդամների առնվազն 2/3 ձայների մեծամասնությամբ) և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը,
7.3.6 Կայացնել որոշում այլ իրավաբանական անձ ստեղծելու մասին (նիստին ներկա Կառավարման խորհրդի անդամների առնվազն 2/3 ձայների մեծամասնությամբ) և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը,
7.3.7 Որոշել Ասոցիացիայի անդամավճարի չափը և վճարման կարգը,
7.3.8 Որոշել Ասոցիացիայի անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու հարցերը,
7.3.9 Որոշել Ասոցիացիայի ընթացիկ գործունեության ուղղությունները,
7.3.10 Երաշխավորել Ասոցիացիայի ծրագրերը,
7.3.11 Հաստատել Ասոցիացիայի էթիկայի կանոնակարգը,
7.3.12 Հաստատել Ասոցիացիայի տվյալ տարվա գործունեության և տարեկան բյուջեի հիմնական ուղղությունները,
7.3.13 Քննարկել նախորդ տարվա գործունեության և բյուջեի կատարման հաշվետվությունները,
7.3.14 Սահմանել գործադիր տնօրենի վարձատրության կարգը և պայմանները,
7.3.15 Ներկայացնել Կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագծերը Ընդհանուր ժողովի քննարկմանը,
7.3.16 Ապահովել Կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների պետական գրանցումը՝ օրենքով սահմանված կարգով:

7.4 Խորհրդի պարտականությունները

Կառավարման խորհուրդը պարտավոր է՝
7.4.1 Առաջնորդվել Ասոցիացիայի Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ,
7.4.2 Ապահովել նիստերի պարբերական անցկացումը՝ Ասոցիացիայի արդյունավետ գործունեության համար,
7.4.3 Ապահովել Ասոցիացիայի նպատակների և խնդիրների իրականացումը,

7.4.4 Վերահսկել գործադիր տնօրենի գործունեությունը,
7.4.5 Համագործակցել Վերստուգող մարմնի հետ՝ Ասոցիացիայի թափանցիկ գործունեության ապահովման նպատակով:

7.5 Խորհրդի անդամների պատասխանատվություն

7.5.1 Խորհրդի այն անդամը, ով 3 անգամ անհարգելի պատճառով բացակայել է Խորհրդի նիստից և չի լիազորել որևէ մեկին Խորհրդի նիստում իր կազմակերպությունը ներկայացնելու համար, Խորհրդի կողմից ստանում է զգուշացում:
7.5.2 Զգուշացում ստանալուց հետո Խորհրդի նիստին չներկայանալու դեպքում՝ դադարեցվում են վերջինիս լիազորությունները որպես Խորհրդի անդամ:

8. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

8.1 Նախագահի ընտրություն և կարգավիճակ

8.1.1 Կառավարման խորհրդի նախագահը ընտրվում է Կառավարման խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից 1 (մեկ) տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ:
8.1.2 Կառավարման խորհրդի նախագահի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն Խորհրդի անդամները՝ ինքնառաջադրման կամ այլ անդամի առաջադրման միջոցով:
8.1.3 Կառավարման խորհրդի նախագահը միաժամանակ հանդիսանում է Կառավարման խորհրդի անդամ և ունի Կառավարման խորհրդի անդամի բոլոր իրավունքներն ու պարտականությունները:
8.1.4 Կառավարման խորհրդի նախագահը հաշվետու է Կառավարման խորհրդին և Ընդհանուր ժողովին:

8.2 Նախագահի իրավունքները

Կառավարման խորհրդի նախագահն իրավունք ունի՝
8.2.1 Հրավիրել և վարել Կառավարման խորհրդի նիստերը,
8.2.2 Հաստատել Կառավարման խորհրդի նիստերի օրակարգերը՝ Կառավարման խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա,
8.2.3 Նախաձեռնել Կառավարման խորհրդի արտահերթ նիստերը՝ անհրաժեշտության դեպքում,
8.2.4 Առանց լիազորագրի ներկայացնել Ասոցիացիան՝ պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,
8.2.5 Ներկայացնել Ասոցիացիան հանրային միջոցառումներում, ֆորումներում, համաժողովներում,

8.2.6 Տալ հարցազրույցներ և հայտարարություններ Ասոցիացիայի անունից՝ Կառավարման խորհրդի հաստատած քաղաքականության շրջանակներում:

8.3 Նախագահի պարտականությունները

Կառավարման խորհրդի նախագահը պարտավոր է՝

8.3.1 Առաջնորդվել Ասոցիացիայի Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ,

8.3.2 Ապահովել Կառավարման խորհրդի նիստերի պարբերական և արդյունավետ անցկացումը,

8.3.3 Ապահովել Կառավարման խորհրդի որոշումների իրականացումը,

8.3.4 Համագործակցել Գործադիր տնօրենի և Վերստուգողի հետ,

8.3.5 Պահպանել Ասոցիացիայի անունը և հեղինակությունը:

8.4 Նախագահի լիազորությունների դադարեցում

Կառավարման խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են Կառավարման խորհրդի որոշմամբ՝

8.4.1 Լիազորությունների ժամկետի լրանալու դեպքում,

8.4.2 Անձնական դիմումի հիման վրա,

8.4.3 Կառավարման խորհրդի անդամության դադարեցման դեպքում,

8.4.4 Կառավարման խորհրդի արտահերթ նիստի որոշմամբ,

8.4.5 Մահվան դեպքում:

9. ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

9.1 Գործադիր տնօրենի ընտրություն և կարգավիճակ

9.1.1 Գործադիր տնօրենը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ 1 տարի ժամկետով:

9.1.2 Գործադիր տնօրենը Ընդհանուր ժողովի կողմից ընտրվելուց հետո կնքում է աշխատանքային պայմանագիր Կառավարման խորհրդի նախագահի հետ:

9.1.3 Գործադիր տնօրենը հաշվետու է Կառավարման խորհրդին և Ընդհանուր ժողովին:

9.2 Գործադիր տնօրենի իրավասությունը

Գործադիր տնօրենի իրավասությունները ներառում են Ասոցիացիայի ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Ասոցիացիայի կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

Գործադիր տնօրենը՝ Կանոնադրությանը, Ընդհանուր ժողովի և Կառավարման խորհրդի որոշումներին համապատասխան՝

9.2.1 Ապահովում է Ընդհանուր ժողովի և Կառավարման խորհրդի որոշումների կատարումը,

9.2.2 Տնօրինում և կառավարում է Ասոցիացիայի ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ասոցիացիայի անունից,

9.2.3 Առանց լիազորագրի ներկայացնում է Ասոցիացիան Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
9.2.4 Տալիս է լիազորագրեր,
9.2.5 Բանկերում բացում է Ասոցիացիայի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
9.2.6 Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9.2.7 Հաստատում է Ասոցիացիայի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
9.2.8 Հաստատում է Ասոցիացիայի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
9.2.9 Հաստատում է Ասոցիացիայի, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,
9.2.10 Նախաձեռնում է աշխատանքային խմբերի և հանձնաժողովների ստեղծումը,
9.2.11 Ստորագրում է Ասոցիացիայի ֆինանսատնտեսական և վարչական փաստաթղթեր, պայմանագրեր և համաձայնագրեր Ասոցիացիայի անունից՝ Խորհրդի լիազորությամբ,
9.2.12 Սահմանում է Ասոցիացիայի աշխատակիցների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառում է խրախուսանք և կարգապահական տույժեր,
9.2.13 Իրականացնում է օրենքով և Ասոցիացիայի Կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ,
9.2.14 Կարող է նախագահել Ընդհանուր ժողովը:

9.3 Գործադիր տնօրենի պարտականությունները

Գործադիր տնօրենը պարտավոր է՝
9.3.1 Համակարգել Ասոցիացիայի ընթացիկ գործունեությունը,
9.3.2 Վերահսկել Կառավարման խորհրդի և Ընդհանուր ժողովի որոշումների կատարումը,
9.3.3 Համակարգել Ասոցիացիայի աշխատակազմի գործունեությունը,
9.3.4 Կառավարման խորհրդի անդամների հետ համատեղ աշխատանքով մշակել և Կառավարման խորհրդին ներկայացնել Ասոցիացիայի զարգացման ռազմավարություն,
9.3.5 Յուրաքանչյուր տարի հաստատել Ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարվա կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան

հաշվետվությունները, որոնք վերստուգողի եզրակացության հիման վրա ներկայացնել Կառավարման խորհրդի հաստատմանը,
9.3.6 Ներկայացնել Ընդհանուր ժողովին Ասոցիացիայի գործունեության մասին հաշվետվություն,
9.3.7 Համակարգել տարեկան բյուջեի մշակումը և ներկայացնել այն Կառավարման խորհրդի հաստատմանը,
9.3.8 Վերահսկել բյուջեի կատարումը,
9.3.9 Համակարգել աշխատանքային խմբերի և հանձնաժողովների գործունեությունը:

10. ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 Ընտրություն և կարգավիճակ

10.1.1 Ասոցիացիայի Վերստուգողը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ (1) տարի ժամկետով:
10.1.2 Վերստուգող կարող է ընտրվել՝
ա) Կառավարման խորհրդի ձևավորման ժամանակ առավել ձայն ստացած, սակայն Խորհրդի կազմում չընտրված լիիրավ անդամը,
բ) Ընդհանուր ժողովի կողմից առաջադրված լիիրավ անդամը:
10.1.3 Վերստուգողը չի կարող լինել՝
ա) Կառավարման խորհրդի անդամ,
բ) Ասոցիացիայի գործադիր տնօրեն կամ Ասոցիացիայի որևէ աշխատակից:
10.1.4 Վերստուգողը հանդիսանում է Ասոցիացիայի անկախ վերահսկողական մարմինը, որն իր գործունեությունն իրականացնում է Կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա:
10.1.5 Վերստուգողը հաշվետու է Ընդհանուր ժողովին և իր գործունեության ընթացքում պարտավոր է պահպանել անկախություն և օբյեկտիվություն:

10.2 Իրավասություններ

10.2.1 Վերստուգողը իրավասու է անցկացնել տարեկան ստուգում՝ Ասոցիացիայի ֆինանսատնտեսական գործունեության, ակտիվների, պարտավորությունների և ռեսուրսների օգտագործման օրինականության և նպատակահարմարության վերաբերյալ:
10.2.2 Վերստուգողն իրավունք ունի ծանոթանալ Ասոցիացիայի գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին, այդ թվում՝
ա) ֆինանսական հաշվետվություններին և հաշվապահական փաստաթղթերին,
բ) պայմանագրերին և համաձայնագրերին,
գ) Կառավարման խորհրդի և Ընդհանուր ժողովի արձանագրություններին և որոշումներին,

դ) բանկային փաստաթղթերին և գործարքներին,
ե) անդամավճարների հաշվառման փաստաթղթերին,
զ) գույքագրման և ակտիվների հաշվառման փաստաթղթերին:
10.2.3 Վերստուգողն իրավունք ունի ուսումնասիրել Ասոցիացիայի անդամների կողմից ներկայացված բողոքներն ու դիմումները՝ Ասոցիացիայի գործունեության վերաբերյալ:
10.2.4 Վերստուգողն իրավասու է գնահատել Ասոցիացիայի գործունեության համապատասխանությունը Կանոնադրությանը, Ընդհանուր ժողովի և Կառավարման խորհրդի որոշումներին, ՀՀ օրենսդրությանը, ներքին կանոնակարգերին և ընթացակարգերին:
10.2.5 Վերստուգողը կարող է ներկայացնել առաջարկություններ Ասոցիացիայի կառավարման մարմիններին՝ գրավոր կարգով:
10.2.6 Վերստուգողն իրավունք ունի մասնակցել Ընդհանուր ժողովներին՝ խորհրդատվական ձայնով:
10.2.7 Վերստուգողն իրավունք ունի մասնակցել Կառավարման խորհրդի նիստերին՝ խորհրդատվական ձայնով (հրավիրված լինելու դեպքում):
10.2.8 Վերստուգողը կարող է պահանջել Ընդհանուր ժողովի կամ Կառավարման խորհրդի արտահերթ նիստի գումարում՝ կարևոր խախտումների հայտնաբերման դեպքում:
10.2.9 Վերստուգողը կարող է ներգրավել անկախ փորձագետներ՝ հատուկ ստուգումների իրականացման համար՝ Ընդհանուր ժողովի հաստատմամբ և Ասոցիացիայի ծախսերով:
10.3 Պարտականություններ
10.3.1 Վերստուգողը պարտավոր է առաջնորդվել Ասոցիացիայի Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ:
10.3.2 Տարեկան առնվազն մեկ անգամ անցկացնել Ասոցիացիայի ֆինանսատնտեսական գործունեության համապարփակ ստուգում:
10.3.3 Ստուգման ավարտից հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում ձևակերպել և ներկայացնել գրավոր եզրակացություն:
10.3.4 Ընդհանուր ժողովին ներկայացնել տարեկան հաշվետվություն, որը ներառում է՝
ա) տարեկան ստուգման արդյունքների ամփոփագիր,
բ) հայտնաբերված խախտումների և թերությունների ցանկ,
գ) առաջարկություններ Ասոցիացիայի գործունեության բարելավման վերաբերյալ,
դ) եզրակացություն Ասոցիացիայի ֆինանսական վիճակի և գործունեության օրինականության մասին:
10.3.5 Ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների և թերությունների

մասին տեղեկացնել Կառավարման խորհրդին և Խորհրդի նախագահին՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

10.3.6 Պահպանել անկախությունը և օբյեկտիվությունը ստուգումների և գնահատումների ընթացքում:

10.3.7 Պահպանել Ասոցիացիայի գործունեության շրջանակներում ստացված գաղտնի և արտոնյալ տեղեկատվությունը:

10.3.8 Խուսափել շահերի բախումից՝ Ասոցիացիայի և անձնական շահերի միջև:

10.3.9 Արձագանքել Ասոցիացիայի անդամների բողոքներին և դիմումներին:

10.3.10 Համագործակցել Կառավարման խորհրդի և գործադիր տնօրենի հետ՝ Ասոցիացիայի արդյունավետ գործունեության ապահովման նպատակով:

10.3.11 Ապահովել բոլոր ստուգումների փաստաթղթավորումը և պատշաճ արխիվացումը:

10.3.12 Չխոչընդոտել Ասոցիացիայի ընթացիկ գործունեությանը ստուգումների իրականացման ընթացքում:

10.4 Լիազորությունների դադարեցում

10.4.1 Վերստուգողի լիազորությունները դադարում են Ընդհանուր ժողովի որոշմամբ՝

ա) լիազորությունների ժամկետի լրանալու դեպքում,

բ) անձնական դիմումի հիման վրա՝ առնվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցմամբ,

գ) Ասոցիացիայի անդամության դադարեցման դեպքում (անդամ Վերստուգողի պարագայում),

դ) Կանոնադրությամբ նախատեսված անհամատեղելիության պայմանների առաջացման դեպքում,

ե) մահվան կամ անաշխատունակության դեպքում:

11. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Ընդհանուր դրույթներ

11.1.1 Անդամների կողմից Ասոցիացիային հանձնված գույքը հանդիսանում է Ասոցիացիայի սեփականություն:

11.1.2 Ասոցիացիան իր գույքն ու դրամական միջոցներն օգտագործում է բացառապես Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

11.2 Ասոցիացիայի ունեցած գույքը

11.2.1 Ասոցիացիան, որպես սեփականություն, կարող է ունենալ՝

ա) շենքեր և շինություններ,

բ) բնակարանային ֆոնդ,

գ) տրանսպորտային միջոցներ,

դ) սարքավորումներ,
ե) դրամական միջոցներ,
զ) բաժնետոմսեր և այլ արժեթղթեր,
է) օրենքով չարգելված այլ գույք:

11.3 Սեփականության գոյացման աղբյուրներ

11.3.1 Ասոցիացիայի սեփականությունը գոյանում է օրենքով չարգելված աղբյուրներից, այդ թվում՝
ա) Ասոցիացիայի անդամների ներդրումներից,
բ) անդամավճարներից,
գ) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից,
դ) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ գործող այլ կազմակերպություններից ստացված միջոցներից,
ե) նվիրատվություններից և նվիրաբերություններից,
զ) ՀՀ պետական բյուջեից ստացված դրամական մուտքերից,
է) դրամաշնորհներից,
ը) հանգանակություններից:

11.4 Պարտադիր աուդիտի իրականացում

11.4.1 Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ Լիազոր մարմնի սահմանած հաշվետվությունը, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ենթակա է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն:
11.4.2 Աուդիտը իրականացվում է Ասոցիացիայի Խորհրդի կողմից ընտրված անկախ աուդիտորի կողմից՝ ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 30-ը:

12. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1 Վերակազմակերպման և լուծարման հիմքերը

12.1.1 Ասոցիացիայի վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կամ լուծարումը կարող է իրականացվել միայն Ասոցիացիայի Ընդհանուր ժողովի որոշմամբ:
12.1.2 Ասոցիացիայի հարկադիր վերակազմակերպումը կամ լուծարումը կարող է կատարվել միայն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով:

12.2 Որոշման ընդունման կարգը

12.2.1 Ասոցիացիայի վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ նիստին ներկա անդամների ձայների առնվազն երկու երրորդի (2/3) մեծամասնությամբ:

12.3 Լուծարման ավարտը

12.3.1 Ասոցիացիայի գործունեությունը համարվում է ավարտված, իսկ Ասոցիացիան՝ լուծարված, իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:

12.4 Գույքի և միջոցների բաշխումը

12.4.1 Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: